

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ (Մահվան 800-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Շ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Հայ ժողովրդի մի զգալի մասի արտագաղթների հերթական ալիքն սկսվեց Անիի Բագրատունյաց թագավորության անկումից (1045 թ.) հետո: Բյուզանդական կայսրությունը գեռ դրանից առաջ մշակած և մասամբ իրականացրած քաղաքականության մեջ դեպի երկրի հարավ-արևմտյան սահմաններն ու մերձակա գավառներն էր տեղափոխում հայության մեծ հատվածներ: Տեղահանվել էին իշխանական տներ, զինական ուժեր, շինականներ և արհեստավորներ: Շատ շանցած, սելջուկյան հրոսակների սրից փախչելով, դեպի աշխարհի զանազան կողմերը գաղթեցին հայության նորանոր զանգվածներ: Աշխուժացան հայ գաղթական տրոհները՝ Ղրիմում, Ուկրաինայում, Լեհաստանում, Ռումինիայում, Հունգարիայում և այլուր: Այս երկրներում հայերը ձրգտում էին պահպանել իրենց գոյությունը, զարգացնել հայրենի մշակույթը, փայփայում էին հայրենիք վերադառնալու հույսը:

Ուրիշ էր երկրի հարավ-արևմտյան սահմաններում՝ Փոքր Ասիայում, Ասորիքում և մանավանդ Կիլիկիայում ապաստանած գաղթականության ճակատագիրը: Այնտեղ կուտակվել էին անհամեմատ ավելի շատ ուժեր, անգամ հայ թագավորական տներ (օրինակ, Անիի Գագիկ թագավորը, Կարսի Գագիկ թագավորը, Վասպուրականի գահաժառանգները), ռազմական ուժեր և, որ զիսավորն է, նրանք գտնվում էին մասամբ հայրենի հողի վրա, մասամբ էլ՝ հարակից գավառներում: Ուստի այստեղ բռնկվեցին ընդվզումներ Բյուզանդական կայսրության դեմ՝ հանգելով Կիլիկյան անկախ թագավորության հաստատման: Նման իրադարձություններ տեղի ունեցան նաև Հյուսիս-Արևելյան Հայաստանում: Այստեղ, վրաց եղբայրական ժողովրդի օգնությամբ, օտար նվաճողներից ազատագրվեցին մի շարք գավառներ: Թվում էր թե կիլիկյան և հյուսիս-արևելյան հայ իշխանություններին կհաջողվեր ազատել նաև երկրի մնացած գավառները, բայց դա չիրականացավ: Ընդհակառակը, վրա հասան թուրք-մոնղոլական հորդաները և խորտակեցին անկախությունն ինչպես Հյուսիս-Արևելյան Հայաստանում, այնպես էլ Կիլիկիայում:

Իրենց վերելքի բավական ընդարձակ ժամանակամիջոցում վերոհիշյալ երկու երկրամասերում, քաղաքական ու տնտեսական կյանքի զարգացմանը զուգընթաց, ծաղկեցին նաև մշակույթի տարբեր բնագավառները՝ մանկավարժությունը, գրչության արվեստը, պատմագրությունը, բանաստեղծությունը, երաժշտությունը, թարգմանական արվեստը և այլն: Հյուսիս-Արևելյան Հայաստանում փայլեցին այնպիսի դեմքեր, ինչպիսիք էին՝ Հովհաննես Սարկավազը, Մխիթար Գոշը, Հովհաննես Վանականը, Վարդան Արևելցին, Ստեփան Օրբելյանը, Մխիթար Այրիվանեցին, Կիրակոս Գանձակեցին, իսկ Կի-

լիկյան Հայաստանում՝ Գրիգոր Մեծ Վկայասերը, Ներսես Շնորհալին, Գրիգոր Տղան, Ներսես Լամբրոնացին, Վահրամ Բաբունին, Թորոս Ռոսլինը և շատ ուրիշներ։ Հիշելի, նոր էջ էր բացվում հայ մշակույթի անդամատանում։

Ահա այս առաջընթացի ու ծաղկման գործում էր, որ իր մեծ ծառայությունները մատուցեց Ներսես Շնորհալին։ Նա մեր իրականության այն եզակի հեղինակներից է, որի անունը նրա կենդանության օրոք իսկ հռչակվեց և՛ Հայաստանում, և՛ նրա սահմաններից դուրս։ Շնորհալու կենսագիրներից մեկն այդ մասին գրում է. «Առ կենդանության իսկ իւրով ոչ միայն ի Հայս պայծառացաւ անուն նորա, այլև մինչև ի մեծն Հռովմ հնչեաց համբաւ նորա... ի մէջ Յունաց պանծալի գովութեամբ քարոզեցաւ անուն տեառն Ներսեսի... նոյնպէս և ընդ ամենայն Ասորիս և յայլևս...»¹։

Ներսես Շնորհալին սերել է հայ ժողովրդի պատմության մեջ հռչակված Պահլավունիների տոհմից։ Նրա մեծ պապը բանաստեղծ, փիլիսոփա, թարգմանիչ, մանկավարժ, զորավար և պետական գործիչ Գրիգոր Մագիստրոսն էր։ Վերջինիս դուստրներից մեկն ամուսնանում է Ապլջահայ Պահլավունու հետ և ունենում Ապիրատ անունով դավակ։ Այս Ապիրատ իշխանի ընտանիքում ծնվում է Ներսես Շնորհալին՝ 1100—1102 թթ.։

Ապիրատ իշխանն ապրում էր Կիլիկիայի և Ասորիքի միջև ձգվող Սև լեռան ձյուղերից մեկի վրա՝ Տլուք գավառի Մովք կոչված զղյակում։ Նրա զավակները դեռ փոքր էին, երբ նա սպանվեց։ Այդ ժամանակ Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամը, որ ընտրված էր կաթողիկոս (Գրիգոր Ի Մեծ Վկայասեր անունով), իր դաստիարակության տակ է վերցնում Գրիգորին և Ներսեսին՝ հոգալով նրանց ուսումնառության գործը։ Շուտով, սակայն, նա մեռնում է՝ Գրիգորի և Ներսեսի դաստիարակությունը կտակելով Անիից կանչված Բարսեղ կաթողիկոսին։ Վերջինս էլ նրանց հանձնում է Քեսուսի մոտ գտնվող և մեծ հռչակ վայելող Կարմիր Վանքի դպրոցը, ուր դասավանդում էր նշանավոր գիտնական Ստեփանոս Մանուկ վարդապետը։ Ներսես Շնորհալու այդտեղ ձեռք բերած կրթության մակարդակը, ինչպես նաև ջանադիր ինքնազարգացումը, նրան դասում են ժամանակի մեծ մտածողների շարքը։

Որպես հասարակական-պետական գործիչ նա համարյա մշտապես աշխատել է կաթողիկոսարանում, որն սկզբում գտնվում էր Մովքում, իսկ հետո՝ Հռոմկլա կոչված ամրոցում։ Շնորհալին զբաղվել է նաև ձեռագրեր ընդօրինակելով. գրել է զանազան թղթեր, մեկնություններ, բաղմաթիվ բանաստեղծություններ՝ թողնելով զրական պատկառելի ժառանգություն։

Իր կյանքի վերջին տարիներին Ներսես Շնորհալին վարել է Հայոց կաթողիկոսի պաշտոնը։ Նա մեռել է 1173 թ. և թաղվել Գրիգոր Բ և Գրիգոր Գ կաթողիկոսների կողքին՝ Հռոմկլայի նորահիմն դամբարանում։

Շնորհալու ստեղծագործություններն ընդհանուր ճանաչում ու ընդունելություն են գտել հեղինակի կենդանության տարիներին և հետագա ժամանակներում։ Այդ են վկայում դրանց բաղմաթիվ ընդօրինակությունները՝ սփռված հայ գրչագրական արվեստի հուշարձաններում և տպագիր աղբյուրներում։ Ուշագրավ է, օրինակ, որ ղեռն 1512—1513 թթ. լույս տեսած հայերեն

¹ Մ. Ավգերյան, Լիակատար վարդ և վկայաբանություն սրբոց, Ե, Վենետիկ, 1813, էջ 334։

առաջին տաղարանում հատուկ տեղ է տրված Ներսես Շնորհալու հանելուկներին²։ Այս բնագավառում բացառիկ երևույթ է նրա «Հաւատով խոստովանիմ» աղոթք-բանաստեղծությունը՝ թարգմանված և հրատարակված տարբեր լեզուներով, որոնցից հատկապես աչքի է ընկնում 1873 թ. հրատարակությունը 36 լեզուներով՝ նվիրված հեղինակի մահվան 700-ամյակին։

Ներսես Շնորհալու թղթերը լույս են տեսել բազմաթիվ անգամներ, իսկ չափածո երկերը՝ հաճախ տարբեր ժողովածուների մեջ, հաճախ էլ՝ առանձին գրքերով։ Վերջիններից կարևորը «Բանք չափաւ» հատորն է՝ տպագրված 1830 թ.։

Շնորհալու կյանքի ու գործի գնահատմանն անդրադարձան կենսագիրները³ նրա մահից անմիջապես հետո, այսինքն՝ «Յայսմաւորք» կոչված ժողովածուները⁴ և այլ աղբյուրներ ու հեղինակներ։ Բացառիկ արժեք ունի Ներսես Շնորհալու մահվան 700-ամյակի կապակցությամբ՝ Լ. Ալիշանի հրապարակած «Շնորհալի և պարագայ իւր» ստվար հատորը։ Շնորհալուն նվիրված էջեր ունի Միք. Նալբանդյանը⁵։ Նրան ամփոփ, բայց համակողմանիորեն ներկայացնող ուսումնասիրություն է նվիրել Մ. Աբեղյանը⁶։ Ներսես Շնորհալու բանաստեղծությունների առանձին մուշնէր վաղուց արդեն ծանոթ են ուսու ընթերցողներին՝ տարբեր ժողովածուներից։ Վ. Բրյուսովի գնահատությամբ՝ «Ներսես Շնորհալին նշանավորագույն և բազմարդյուն գրողներից մեկն է, որն ունեցել է վիթխարի ազդեցություն իր ժամանակի մտածողության վրա»։

Ներսես Շնորհալու, նրա գրչակիցների, ինչպես նաև նրանց անմիջական նախորդների ու հաջորդների ստեղծած նորորակ գրականությունը հանդիսանում էր իր ժամանակի ընդհանուր առաջընթացի օղակներից մեկը։

* * *

Ներսես Շնորհալու գրական ժառանգությունը բաղկացած է հիմնականում երկու մասից. արձակ և չափածո։

Շնորհալուց մեզ հասած արձակ գործերն իրենցից ներկայացնում են զանազան թղթեր, նամակներ, ճառեր, մեկնություններ, որոնց մեջ արտացոլված ենք գտնում մի կողմից ժամանակի սոցիալ-տնտեսական և պատմա-քաղաքական իրադարձությունների, իսկ մյուս կողմից՝ իր՝ հեղինակի որպես քաղաքացու և մտածողի մոտավոր պատկերը։ Այդ երկերի մեջ հատուկ տեղ ունի նրա «Թուղթ ընդհանրականը»⁷։ Դա պաշտոնական գրություն է՝ ուղղված հայ ժողովրդի բոլոր խավերին։ Թղթի նպատակն է աշխարհասփյուռ հայությանը համախմբել հայրենիքի դաղափարի շուրջը, պայքարել ներքին տրոհումների դեմ և ստեղծել միասնական ձակատ՝ ընդդեմ բոլոր ջլատիչ ու թըշնամական ուժերի։ Հստակ պատկերացում չունենալով սոցիալական շերտա-

2 «Տաղարան է սայ հոգոյ և մարմնոյ», Վենետիկ, 1512—1513։

3 «Սոփերք հայկականը», ԺԻ, Վենետիկ, 1854։

4 Տե՛ս հունիսի 13-ի և օգոստոսի 5-ի տոները։

5 Մի ք ա յ ե լ Ն ա լ լ ա ն դ յ ա ն, Ը ն տիր երկեր, Երևան, 1953, էջ 309—322։

6 Մ. Ար ե դ յ ա ն, Երկեր, Դ, Երևան, 1970, էջ 96—156։

7 «Армянская поэзия в переводах В. Я. Брюсова», Ереван, 1956, էջ 20։ Ներսես Շնորհալու բանաստեղծությունների թարգմանությունները, էջ 140—150։

8 Ն եր ս ե ս Շ ն ո Ր հ ա լ ի, Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865, էջ 1—112։

վորումների և նրանց միջև առկա ներքին անհաշտելի հակասությունների մասին, Շնորհալին ձգտում էր հնարավորին չափ մեղմել, թուլացնել եղած հակասությունները: Այդ նպատակով նա, դիմելով իշխաններին, գրում է. «Մի՞ որպէս զանբան կենդանիս՝ որ բնութեամբ ծառայք են մարդկան, ծառայեցուցանէք զմարդիկ՝ որ ընդ իշխանութեամբ ձերով լինին, ի գործ խիստ և աններելի»⁹: Արտաքնապես սովորական թվացող այս դատողութեամբ ներսես Շնորհալին փաստորեն ուղղակի հակադրվում էր աստվածաշնչային այն «իմաստութեանը», որն ասում էր. «Բիր և բեռն և բուտ՝ իշոյ, հաց և գան և գործ՝ ծառայի. զայրացիր նմա զանիւ և գտցես հանդիստ»¹⁰, իսկ որ աստվածաշնչային այդ գաղափարները միջնադարյան հայ իրականության մեջ ևս երբեմն որոշ նշանակություն ունեին, դա երևում է հայ քարոզիչներից մեկի հետևյալ մեկնաբանությունից. «Անասունք օգտակարք են մեզ ոմանք ի կերակուրս և ոմանք ի զգեստս, ի բեռինս և յայլս: Նոյնպէս և աղքատք ամենայն շահաբերք և օգտակարք են մեզ, բեռնակիր լինին մեզ... նոյնպէս զգեստն, նոյնպէս զկերակուրն և զայլ ամենայն բարութիւնս ժողվեն մեզ»: Ուստի պետք է պահել ու պահպանել ոչ միայն անասուններին, այլև աղքատներին, քարոզում է նա¹¹: Հանդիմանելով իշխաններին, Շնորհալին գրում է. «Բաւական լիցի ձեզ, զի վաստակօք նոցա (իմա՝ ծառաների— Ա. Մ.) մեծանայք և առաւել քան զշափն փափկանայք, և այն, զի ոչ թէ այլ բնութիւն է նոցա, և այլ ձեր. այլ ի միոյ կաւոյ և ի խառնուածոյ»¹²: «Վասնզի,—բացատրում է նա,—զուգահաւասար ամենեքեան ծննդեամբ մտանին յերկիր»¹³:

Ներսես Շնորհալին նույն թղթում հերքում է ճնշողների այն բոլոր արդարացումները, որոնցով նրանք դիմադրում էին, ասելով. «Եթե ոչ զրկեմք և ոչ յափշտակեմք, զիշխանութիւն մեր ոչ կարեմք հաստատուն պահել»¹⁴: Շնորհալին բողոքում է հարստահարումների, խաբեբայությունների, կողոպուտների դեմ. «Մի՛ շար և անիրաւ գործակալս և գաւառապետս կացուցանէք ի վերայ աշխարհի ձերոյ»¹⁵,—պահանջում է նա իշխաններից: «Եւ մի՛ որ խաբեութեամբ և նենգաւորութեամբ վաճառեսցէ զստացուածս իւր անմեղ զնողաց. մանաւանդ ստախոսութեամբ և սուտ երգմամբ զռամիկսն և զանդետսն խաբելով...»¹⁶, «Մի՛ տայք զարծաթ ձեր ի վարձու... որք նեղին ի լռնութենէ իշխողաց, և ուտէք զաղքատութեան վաստակս նոցա ի շահս վաշխիցն...»¹⁷,—պահանջում է ներսես Շնորհալին վաճառականներից: Այս եղանակով էր նա ձգտում մի կողմից հնարավորին չափ տանելի պայմաններ ստեղծել ճնշվածների համար, իսկ մյուս կողմից՝ հասնել ներքին համերաշխության, որպեսզի հնար լիներ «Դարձուցանել զամենեւեան յաշխարհն հայրենի... յարուցանել թագաւոր արդար և իշխանս յիրաւունս աստուծոյ հաստատեալս»¹⁸:

⁹ Նույն տեղում, էջ 94:

¹⁰ «Սիրաբ», լ'Ի, 25—26:

¹¹ Նշտողի անվան Մատենադարան, ձեռ. № 5958, Թ. 85Ե—86ա:

¹² Ն եր ս ե ս Շ ն ո Ր հ ա լ ի, Թուղթ ընդհանրական, էջ 95:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Նույն տեղում, էջ 97—98:

¹⁵ Նույն տեղում, էջ 93:

¹⁶ Նույն տեղում, էջ 107:

¹⁷ Նույն տեղում, էջ 426:

¹⁸ Նույն տեղում:

Ներսես Շնորհալու թղթերի մյուս խմբից ծանոթանում ենք նրան որպես խաղաղության ջատագովի։ Ուժի դիրքերից դործելու բյուզանդացիների առաջարկներին նա հակադրեց հավասարության գաղափարը. «Մի՛ եղիցի որպէս տեառն առ ծառայս և ծառայից առ տեարս»¹⁹, որովհետև, զրու՛մ է նա, բրիս-տոնեական կրոնը հավատացյալ ազգերի միջև խտրականություն չի դնում։ Շնորհալու վարած այդ բաղաբականությունը շարունակեց նրա հաջորդը՝ Գրիգոր Տղան, որը ի վերջո բախվեց դառն իրականությանը և նզովք կարգաց բոլոր նրանց, ովքեր փորձում էին իրենց կամքը թելադրել հայ ժողովրդին։

Ներսես Շնորհալու արձակ երկերի շարքում ուշագրավ տեղ են զբաղում նաև մեկնողական զանազան գրվածքները, որոնց էջերում աստվածաբանական խնդիրներից բացի նկատվում են ժամանակի աշխարհայացքի հետ կապված մեծարժեք մտքեր։ Դրանցից մեկն ասում է. «Քանզի ամենայն ինչ որ յաշխարհի է յերկուս բաժանի. ի կարևորն և ի վայելմունս։ Կարևորք հարկաւորք են, որպէս լոյս և օդ և երկիր և ի նմանէ՝ հաց և աղբիւրք ջուրց. առանց նորա ոչ է հնար կեալ։ Իսկ վայելչութիւնն հեշտալիք են և փափկացուցիչք, որպէս գինի և միրք և համեմք և խորտկարարութիւնք և պայծառագունութիւնք և ակսւնջաց հեշտալրութիւնք, որք զգայութեանց են հեշտալիք՝ վայելչութիւնք և հանգիստք»²⁰։ Այստեղ մենք տեսնում ենք հոգու և մարմնի դարավոր պայքարի նոր մեկնաբանություն։ Շնորհալին աշխարհի վրա նայում է մարդկային պահանջների դիրքերից և ամեն ինչ բաժանում երկու խմբի՝ կարևոր և վայելչական։ Եվ եթե ոչ հեռավոր անցյալում մերժվում էր անգամ կարևորը, ապա Ներսես Շնորհալին պաշտպանում է և՛ կարևորի, և՛ վայելչականի անհրաժեշտությունը՝ վերջինիս մասին գրելով. «Այլև, որք ոչ թուին կարևորք՝ մեծապես օգուտ գործեն կատարելոցն... երևելի գունովս և համովս և հոտով և լրով և հանգստութեամբ»²¹։ Չնայած իր աստվածաբանական հիմնավորմանը, այս գրույթը արդարացնում էր կյանքը լիարժեք վայելելու մերժված հայացքը և նոր ուղի թելադրում ժամանակի մշակույթին ու ճաշակին։

Գալով Ներսես Շնորհալու քննվող գործերի գրական արժանիքներին, պիտի ասել, որ դրանց մի մասը շարունակությունն է այն թղթերի ու նամակների, որոնց հանդիպում ենք «Գիրք թղթոց» ժողովածուում, Գրիգոր Մագիստրոսի մոտ և ուրիշ աղբյուրներում։ Այլ է սակայն «Թուղթ ընդհանրականը»։ Դա մի եղակի ասեղծագործություն է իր կառուցվածքով և հասարակական խնդիրների տարողությամբ։ Հեղինակը, կամենալով ընդգրկել ողջ հայությունն իր բոլոր հատվածներով, նրանց դասակարգում է ըստ հասարակական շերտավորման։ Կրոնավորներ, իշխանավորներ, ժողովրդականք և այլն։ Այդ եղանակով նա տարբերակում է յուրաքանչյուր խավի ներքին հակասությունները և որոշակի խոսք ասում դրանց մեղմացման մասին։

Ուշագրավ է այն, որ Ներսես Շնորհալին իր թղթերում պաշտպանած հայացքների հաղթանակի համար դիմել է նաև րանակցությունների, մի կողմից փորձելով հարթել երկրի ներքին տերերի (Խուրխյաններ և Օշինյաններ) միջև ծագած հակամարտությունները, իսկ մյուս կողմից՝ բանակցելով բյու-

¹⁹ Ն եր ս ե ս Շ ն ո Ր հ ա լ ի, Ընդհանրական թուղթ, Երուսաղեմ, 1871, էջ 117։

²⁰ Ն եր ս ե ս Շ ն ո Ր հ ա լ ի, Մեկնութիւն սուրբ աւետարանի որ ըստ Մատթէոսի, ի Հասան Փաշա Խանն, 1825, էջ 6։

²¹ Նույն տեղում։

զանդացիների, ասորիների, ինչպես նաև Հայաստանի զանազան ներկայացուցիչների հետ: Երկու բնագավառում էլ նա բացում է նոր ճանապարհ, որով ընթացան նրա հաջորդները: Այդ ուղղությունն վերջնական արդյունքը եղավ Կիլիկյան Հայաստանի ինքնուրույն թագավորության ստեղծումը դարավերջերին:

* * *

Ներսես Շնորհալու չափածո ստեղծագործությունները բաժանվում են մի քանի խմբերի. շարականներ, տաղեր, գանձեր, երգեր-բանբեր, ներբողներ, խրատական բանաստեղծություններ, ուղերձ-քերթվածներ, հիշատակարաններ, հանելուկներ, պոեմներ և այլն:

Շարականներ: Այս ժանրը ծնունդ առավ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և ուրիշների հոգևոր երգերից՝ Ստեփանոս Սյունեցու սահմանած կարգավորումների շնորհիվ: Ժամերգության համար ստեղծված համապատասխան ձևոնարկը (շարականոց), այսպիսով, ղարձավ աստվածաշնչային նյութերի կողքին ստեղծված բանաստեղծական առաջին խոշոր հավաքածուն: Վերջինս իր ավարտին հասավ Ներսես Շնորհալու բաղմամբիվ շարականներով, որոնք մեծ թարմություն բերին այդ բնագավառին թե՛ ձևով և թե՛ բովանդակությամբ: Այդպիսի նմուշներից է, օրինակ, Վարդանանց ճակատամարտին նվիրված հայտնի շարականը, որտեղ զրվատվում են հանուն հայրենիքի և նրա անկախության ընկած Վարդան Մամիկոնյանն ու նրա զինակիցները.

Նորահրաշ պսակաւոր զօրագլուխ առաջնեաց,
Վառեցաւ զինու հոգոյն՝ արիարար քնդդէմ մահու,
Վարդա՛ն, քաջ նահատակ, որ վանեցէր զքշեամին,
Վարդագոյն արեամբդ քո պսակեցէր զեկեղեցի...
Բամկական խումբ հագարաց և երեսնից քիւ քնդ վերից,
Ուր քնդ նորին նահատակեալք արիարար պատերազմաւ...²²

Տաղեր: Շարականոցային պոեզիան, լայնացնելով իր ընդգրկումները, ծնունդ տվեց նոր երգերի, որոնք կոչվեցին տաղ: Տաղերի արվեստն իր ավարտուն կերպարանավորումն ստացավ Գրիգոր Նարեկացու գրչի տակ:

Ձուտ կրոնական, աստվածաշնչային թեմաներից բացի այստեղ էլ շոշափվեցին հայ իրականության հետ կապված նյութեր: Այդպիսիք են, օրինակ, Հռիփսիմյանց կույսերին, Տրդատ թագավորին նվիրված տաղերը: Մեծ են նաև Շնորհալու տաղերի բերած ձևի և արվեստի նորությունները. այստեղ առաջին անգամ հանդիպում ենք կանոնավոր տաղաչափությամբ, կայուն տնկրով և հետևողական հանդավորմամբ գրված տաղերի:

Գանձեր: X դարից սկսած հայ բանաստեղծության մեջ ծնունդ առավ և ձևակերպվեց չափածո խոսքի մի նոր տեսակը՝ դանձր: Նրա առաջին ավարտուն օրինակները տվեց Գրիգոր Նարեկացին՝ դառնալով այդ ժանրի հիմնադիրը: Շնորհալին վերականգնացրեց նարեկացու գանձերը և մեծացրեց նրանց թիվը: Գանձերի ուշադրավ առավելությունն այն էր, որ թեմաների սահմանները լայնացնելուց բացի նրանք համարյա պարտադիր կարգով տեղ էին

²² «Մարդարիտներ հայ քնարերգության», Ա, Երևան, 1971, էջ 93—94:

տալիս երկրի վիճակին, խաղաղությունը, առատ ու անկորուստ բերք ցանկանալով ժողովրդին: Օրինակ, իր գանձերից մեկում Շնորհալին խնդրում է «սպահել սպահողին էից զամենեկան յապահովս... զհայրապետն մեր՝... վանականօք և աշխարհայնօք, զթագաւորս՝ հնազանդելօք, և զիշխանս՝ իշխեցելօք, զօրականսն՝ զօրօք և ժողովս՝ ժողովրդօք...»²³: Այսպիսով, ժողովրդի առօրյա կյանքի, երկրային հոգսերի թեման մտնում էր գանձարան ժողովածուների և պոեզիայի մեջ:

Դեռևս Նարեկացու կողմից յուրաքանչյուր գանձի կցվում էր համապատասխան տաղ և դրանք միասին էին երգվում: Այդ արվեստը զարգացրեց նաև Շնորհալին: Ըստ որում, թե՛ մեկի և թե՛ մյուսի մոտ տաղերն էլ իրենց հերթին էին հարստանում «փոխ» կամ «հորդորակ» կոչվող կցորդով, ստեղծելով բանաստեղծությունների ամբողջական շարքեր (գանձ, տաղ, փոխ), որոնք թարմություն էին հաղորդում ինչպես շափածո խոսքին, այնպես էլ երաժշտությանը, որովհետև դրանք բոլորն էլ երգվում էին:

Երգեր—բաներ: Չնայած «երգ» և «բանք» հասկացությունները ավելի լայն իմաստ ունեն և հավասարվում են «բանաստեղծություն» հասկացությանը, սակայն Ներսես Շնորհալու կապակցությամբ այդպես ասելով նկատի ունենք նրա այն ստեղծագործությունները, որոնք չեն մտնում մյուս խմբերի մեջ և ձևագրերում սովորաբար կոչվում են «երգ», իսկ երբեմն էլ «բան»: Այդպիսիներից մեկն է, օրինակ, հռչակավոր «Առաւօտ լուսոյ» բանաստեղծությունը: Այստեղ առաջին գծի վրա են բանաստեղծի անձնական ասորումներն ու տրամադրությունները: Երկնային տիրոջն ուղղված խոսքերում հեղինակը ձրգտում է հասնել բարձր արժանիքների ու առաքինությունների: Ուշագրավ է, օրինակ, սկզբի տունը, ուր դրսևորվում է բանաստեղծի ծարավը «լույս»-ի նկատմամբ, և անուղղակի առկա է նաև լույսի ու արևի վառաբանումը.

Առաւօտ լուսոյ,
Արեգակն արդար,
Առ իս լոյս ծագեա...²⁴

Ներբողներ: Հնուց ի վեր մեր դպրությանը ծանոթ այս ժանրը Ներսես Շնորհալու գրչի տակ վերածվում է կանոնավոր շափածոյի՝ մնալով հոգևոր թեմաների շրջանակներում: Դրանցից ուշագրության արժանի է, օրինակ, «Բարձրացուցէք» բառով սկսվող ներբողը²⁵, որի հիմքում ընկած է V դարի հեղինակ Դավիթ փիլիսոփայի աղատ բանաստեղծությամբ զրված ստեղծագործությունը: Ըստ այդմ, կարելի է ասել, որ մեր պոեզիայում սկիզբ էր առնում դրական հին հուշարձանների վերանայման փորձը, որը եթե տվյալ դեպքում կապված է հոգևոր թեմայի հետ, ապա նույն Շնորհալու ուրիշ գործերում և մանավանդ հանելուկներում առաջին անգամ աղատորեն թեմակոխում է բուն ժողովրդական բանաստեղծության գանձարանը:

Խրատական բանաստեղծություններ: Հայ բանաստեղծության՝ դեպի հասարակական միջավայրը կատարած առաջընթացում հատուկ նշանակություն են ստացել խրատական ստեղծագործությունները: Այդպիսիների առաջին

²³ Նույն տեղում, էջ 491:

²⁴ «Մարդարյտներ հայ քնարերգության», Ա, էջ 81—85:

²⁵ Ն եր ս ե ս Շ ն ո Ր հ ա լ ի, Բանք շափաւ, Վենետիկ, 1830, էջ 228—276:

նմուշները ևս տվել է ներսես Շնորհալին: Նա այդ նպատակով օգտագործել է, հիմնականում, հայկական այբուբենը՝ յուրաքանչյուր տառի հետ կապելով մի խրատ: Ըստ այդմ, տառերն անձնավորվել են որպես իմաստուն խորհրդատուներ, որով և բանաստեղծությունը դարձել է այբուբենի անուղղակի դրվատանքի ու մեծարման խոսք:

Այդպիսի բանաստեղծություններից մեկը ուղղված է ողջ հասարակությանը, որի մեջ, ի շարս բարոյական խորհուրդների, հանդիպում ենք նաև սոցիալական ու քաղաքական խրատների: Ահա, օրինակ, «Տ» տառին նվիրված տունը.

Տիւնըն տերանց և իշխանաց
 Խրատ քնծայէ իմաստութեանց,
 Թէ մի՛ սիրեմ ժողովել զանձ,
 Այլ՝ ըզժողով բարի արանց,
 Բզմբաբերիմսըն տէրութեանց
 Նւ զհետևողսն քաջութեանց,
 Որք վասըն ձեր ի մահ անձանց
 Կամաւ զիմեն որպէս ի զանձ²⁶:

Նման մի ուրիշ բանաստեղծություն էլ նվիրված է աշակերտությանը և առհասարակ ուսումնառու երիտասարդությանը: Այստեղ հեղինակն ինքն է գովերգում տառերի իմաստուն էությունը, նրանցից յուրաքանչյուրի հետ կապելով մի խրատ՝ ուսումնասիրության, աշխատասիրության, լուսավորության, ազնվության, արդարության և նման այլ գաղափարների վերաբերյալ, նախատելով ծուլությունը, խարդախությունը և մյուս արատներն ու շարիքները²⁷:

Ուղերձ-ֆերթվածներ: Նկատի ունենք Շնորհալու ստեղծագործությունների այն խումբը, որ հասցեագրված է պատմական անձանց և շոշափում է առօրեական, երկրային, հասարակական ղանազան հարցեր: Դրանցից մեկն ուղղված է «Առ ուն Արեւելեան իշխան վասն որդւոյ իւրոյ տաւածամ մեռելոյ»²⁸: Հենց խորագիրը ցույց է տալիս, թե ներսես Շնորհալին ինչպես էր մոտենում առօրյա հարցերին ու հոգսերին: Մի այլ ընդարձակ քերթվածով նա գոհացում է տալիս միջնադարի հայ խոշորագույն բժշկապետ Մխիթար Հերացու հետաքրքրասիրությանը՝ երկնքի և երկրային մարմինների մասին, գրելով տիեզերագիտական բնույթի առաջին ոտանավորը՝ համապատասխան ուղեորով: Հետագայում այս օրինակին հետևեցին Հովհաննես Երզնկացին և շատ ուրիշներ՝ ստեղծելով տիեզերագիտական-տոմարագիտական բանաստեղծությունների մի ամբողջ շարք:

Այս խմբի ստեղծագործություններից մեծ արժեք ունի Շնորհալու «Առ եղբորորդին իւր Ապիրատն»²⁹ քերթվածը: Դա փաստորեն ռազմիկ գործչի գովքն է՝ կապված հայրենասիրական-աղատագրական գաղափարների հետ.

26 Նույն տեղում, էջ 326—340:

27 Նույն տեղում, էջ 341—350:

28 Նույն տեղում, էջ 306—312:

29 Նույն տեղում, էջ 303—306

Արեգական լուսոյ ծագման
 Սէր քո առ իս համանրման...
 Պանծացելումդ արիական,
 Զիավարժից ներհրմտական,
 Ի տէգ-նիգակ շարժողական,
 Որպէս ծրղօտ մի եղեգան,
 Րամեալ յահեակ կրօնող վահան,
 Իբր սանձով անշեղական,
 Արիութեանց պարառական,
 Նախնեաց քաջացրն գոլ նրման...

Շնորհալին, սակայն, չի մոռանում, որ Ապիրատը գտնվում է բյուզանդական արքունիքում, ուր նրան ճանաչում և գնահատում են կայսրն ու արքունիքի մեծերը, ուստի խնդրում է հիշել հարազատներին.

Տիրականիդ ընդհանրական,
 Որպէս լսեմ, դու՝ պատուական.
 Նաև միսում սեռ արփունեան
 ՅԱնդրոնիկեայ սիրալրական,
 Բսկ առ ի մէնջ՝ հրաժարական
 Ի սիրեցեալքս քո բնական...

Շնորհալին մի առավել կարևոր նպատակ էլ ունի. նա հավատացած է եղել, թե Ապիրատը արքունական զորքով գալու է Կիլիկիա՝ քոչվոր նվաճողների («սկյութացիներ») գեմ.

Րոտել ի յայս վայր ամրական
 Գալով քոյին ընդ բիրական
 Ներածութեամբ արփունական՝
 Առ սկիւթացիս ահեղ գոչման:
 Երանութեանց արժանացան,
 Որք տեսանեն գայս եղական:

Ուստի խնդրում է գրավոր հավաստիացում.

Րաբունաբար գրաւորական
 Ծանո՛թ է՞ քստուգական.
 Սիրտից մերոց նրադական
 Լինել յուսով գրաւորական:

Գուցէ մի սովորական նամակ չէ, այլ հայրենասիրական, ազատագրական նպատակով գրված բանաստեղծութիւն:

Հիշատակարաններ: Հին է հիշատակարան գրելու արվեստը, սակայն նոր է չափածո հիշատակարանը և մանավանդ չափածո ստեղծագործութիւններին կցվող հիշատակարանը: Այս առումով ևս Շնորհալին առաջինն է մեզանում: Նա իր ծավալուն, իսկ հաճախ էլ փոքրածավալ ստեղծագործութիւններն ավարտում է չափածո այնպիսի հիշատակարաններով, որոնք կարող են առանձին բանաստեղծութիւն համարվել: Այդպիսի կցորդներում նա խոսում է տրվ-

յալ երկի, իր նպատակի, ժամանակի, միջավայրի, ինչպես նաև անձնական-կենսագրական բնույթի հարցերի վերաբերյալ: Ուշագրավ են, օրինակ, «Յիսուս Որդի», «Բան հաւատոյ» և այլ երկերի ընդարձակ հիշատակարանները: Դրանցից առաջինում հեղինակը հատուկ տեղ է հատկացրել երկրի վիճակի նկարագրությանը, ինչպես նաև բնության գովերգությանը.

Մսւսուտ Սուլտան յիկոնացոց
 Եկեալ յաշխարհ գերմանացոց,
 Առեալ զաւանս քաղաքայնոց
 Մինչ ի կողմանս եփրատացոց:
 Իսկ Հայրապետ հանուրց Հայոց...
 Ի Մով անուն զղէկէն ելեալ,
 Զոր սեփհական ինքեան շինեսալ,
 Ի յանառիկս ամրոց հասեալ՝
 Հռոմայական կլայ յորչորչեալ...
 Յորում բնակեմք յայսմ ամրոցի
 Ի գետապատ քաղաքնայի,
 Ի յեփրատայ պարագրի,
 Որ յԱլեքայ քաղաքի հոսի,
 Յնից կուսէ հեզիկ շարժի,
 Ի մես փոքուէ մրտիւք պատի,
 Ինքս ամբարձեալ իբր լղկրղի...³⁰:

Ներսես Շնորհալին սիրել է նաև ուրիշ հեղինակների երկերն օժտել բանաստեղծական հիշատակարաններով: Այդպիսիներից առավել ուշագրավները Սողոմոն Իմաստունին և Նրա զրբերին (Առակք, Ժողովուրդք, Իմաստութիւն, Երգ-Երգոց) նվիրված յոթ ձոն-հիշատակարաններն են, որ ուղղված են ընթերցողներին և նպատակ ունեն սեր արթնացնել դեպի իմաստությունը, գիտությունը, լուսավորությունը: Հիշենք, որ Մեսրոպ Մաշտոցն էլ հայ դպրության հիմնաքարը դրեց այդ զրբերի վրա, որոնցից առաջինն սկսվում է հանրահայտ «Ճանաչել գիմաստութիւն և գիտատ, իմանալ զբանս հանճարոյ» բառերով:

Զափածո հիշատակարանների այս հաջող և ավարտուն օրինակները մեծ ընդունելության արժանացան ժամանակակիցների³¹ և հետագա հեղինակների կողմից, հիմք հանդիսանալով դրական հատուկ ժանրի:

Հանելուկներ: Ժողովրդական բանահյուսության հարուստ զանձարանի օգտագործման անհրաժեշտությունն ու հնարավորությունները XII—XIII դարերում այնքան էին հասունացել, որ Ներսես Շնորհալին զբաղվեց հանելուկների մշակմամբ և հորինումով: Նրա հանելուկների տպագրությունը, ինչպես նշվեց, սկսվել է դեռևս 1512 թ.:³² Հարունակվելով մինչև մեր օրերը, Այդուամե-նայնիվ դրանց բազմաթիվ նմուշներ ցարդ մնացել են անհայտ ու անտիպ: Մինչև վերջին ժամանակներս ընդունված էր ասել, թե դրանց ընդհանուր քանակը հավասար է շուրջ 120 միավորի, սակայն 1940-ական թթ. մեր կատա-

³⁰ Նույն տեղում, էջ 224—225:

³¹ Գրիգոր Տղա, Բանաստեղծություններ և պոեմներ, Երևան, 1972, էջ 30—40:

րած որոնումները երևան հանեցին նորանոր նմուշներ, այդ թիվը հասցնելով շուրջ 300-ի³²։

Ներսես Շնորհալու հանելուկները իրենց շոշափած թեմաներով կարող են բաժանվել երկու խմբի. հոգևոր և աշխարհիկ։ Սակայն առաջին խմբի հանելուկները ևս չեն պատկանում միայն հոգևոր բանաստեղծության բնագավառին, որովհետև փաստորեն աշխարհիկ մտածողության արդյունք են՝ ժողովրդական բառ ու բանի տարազով։ Ահա Աբիսակ Սոմնացուն բնութագրող հանելուկը.

Կոյս մի կայր՝ ազուոր աչեր,
'ի ունէր կարմիր, բարակ շրքներ.
Ձողջ գիշերուն ածէր գրկեր,
Վաղըն բարով ելնէր ի վեր³³։

Նման հանելուկները հագեցված էին աշխարհիկ ու երկրային ըմբռնումներով և ստեղծված էին ընթերցողներին ոչ միայն իմացություններով հարուստացնելու, այլև կրթելու, դաստիարակելու նպատակով։

Ինչ վերաբերում է Շնորհալու զուտ աշխարհիկ բնույթի հանելուկներին, ապա դրանք, հիրավի, այնքան թարմաշունչ են, որ թվում են գրված ոչ թե XII դարում, այլ շատ ավելի հետո։ Հիշենք ուղտին բնութագրող հանելուկը.

Աւատա՛ որ չէ նա խիստ խեղ,
Ձեռ կըռնկու է վիզն ու կեղ,
Ձեռ զայլազգի ելնէ ի լեղ,
Բընաւ շառնու յոտքն բեռն³⁴։

Ներսես Շնորհալին հանելուկների համար նյութ է որոնել ինչպես գրքերում, այնպես էլ կյանքում, բնության մեջ և հասարակական առօրյայում, երբեմն էլ կարծես ուղղակի գրի առնելով կամ մասամբ մշակելով ժողովրդական հանելուկները։ Այդպիսին է, օրինակ, Մատենադարանի № 2961 ձեռագրում պահպանված շարքի «Բղեղը».

Ի վեցից վերսցել
Եւ ի շորից քոռցել.
Գայր ընդ երկնից շառանչելով.
Ծիրանագգեստիւֆ պննեալ
Եւ զանգեալն առ նանապարհաւն
Ըզրազկաւն քաւալեցուցանէր,
Եւ ոչ ոք գիտէր՝ ուստի՞ զա կամ յո՞ք երթա³⁵։

Այս հանելուկների շարքում առանձնապես ուշագրավ են մի քանի հայրեն-հանելուկներ, որոնք այդ ժանրի առաջին գրավոր նմուշներն են, ժողո-

32 Տե՛ս «Սովետական Հայաստան», 1946, ապրիլ, 10։

33 Ն եր ս ե ս Շ ն ո Ր հ ա լ ի, Բանք չափաւ, էջ 561։

34 Նույն տեղում, էջ 579։

35 Այս սկզբնաղբյուրի մեջ պահպանված է Ներսես Շնորհալու հանելուկների ամենահին (1321 թ.), ամենաընտիր և ամենահարուստ (շուրջ 300 նմուշ) շարքը (թերթ 231—242ր), որից սակայն կտրված և հեռացված է 11 թերթ։

վրրդական հայրենների առաջին մշակումները։ Ահա դրանցից մեկը (պահպանված № 2961 ձեռագրում), որ նվիրված է հրահանին ու ճրագին.

Երկուք բնյ իրար կոռին, (Կայծքար և պողպատ)
Մէկ ի մէկի իսկի շնմանին.
Մէկ մ' ալ ի նոցա միջին
է մեռած'ի բնկած ի տեղին. (Հաբեթ)
Այնոք, որ զկոլին արին՝
Շատ արին ի վայր վաքեցին. (Կայծեր)
Ի յայն արունին ցողէն
Շունչ տուաւ բնկած մեռելին. (Կրակ)
Մեր մ'ալ բարեխօս բերին. (Ճրագ)
Համբուրեց զերես մեռելին.
Ի յայն համբուրէլ ծերին՝
Լոյս ծագեաց մըքան զիշերին:

Այս եղանակով փաստորեն գրականության ասպարեզն էին մտնում հարյուրավոր աշխարհիկ թեմաներ՝ դոներ բացելով այնպիսի հասկացությունների առջև, ինչպիսիք են երկինքն ու երկնային մարմինները, երկիրն ու նրա բարիքները, կենդանական ու բուսական աշխարհները, մարդն ու նրա միջավայրը, կյանքն ու առօրյան, գիտությունն ու գրականությունը՝ իրենց ողջ բազմազանությամբ։ Բուն ժողովրդական նյութն ու ժանրը իրենց հետ գրականություն են բերել նաև ժողովրդի խոսակցական լեզուն, նրա մտածելակերպը։

Պոեմներ։ Ներսես Շնորհալու պոեմների մի մասը պատկանում է հոգևոր, իսկ մյուս մասը՝ աշխարհիկ գրականության։ Առաջիններից նշանավոր է «Յիսուս Որդին», որը բոլոր էության շարունակված է Գրիգոր Նարեկացու «Մատենի» գիծը։ Եվ եթե վերջինս ստեղծված է ազատ բանաստեղծությամբ, ապա Շնորհալին անցել է կանոնավոր չափածոյին³⁶։ Հիմնական խնդիրը միջնադարյան հավատացյալի ճակատագրի հակասականությունն է, հոգու և մարմնի փոխհարաբերության սխալ պատկերացմամբ ստեղծված ողբերգությունը։ Գրիգոր Նարեկացու ժամանակի և միջավայրի վաղեմիության կնիքն այստեղ փոխված է նոր ժամանակների դրոշմով։ Մարդու կենսասիրական իրավունքներն ավելի են պաշտպանված և նրա հասարակական դերն ավելի է ընդգծված։ Դա խոսում է ոչ միայն պոեզիայի ընդհանուր առաջադիմության, այլև ժանրի նոր կերպարանքի մասին։ Այս պոեմը մեծ ազդեցություն ունեցավ հետագայի բանաստեղծների վրա։ Նրա առանձին հատվածների հետևությունները գրվեցին հաշատուր Կեչառեցու, Հովհաննես Երզնկացու, Ֆրիկի և ուրիշների հոգևոր բանաստեղծությունների մի մասը։ Դա գեղարվեստական խոսքի նորանոր գյուտերի մի շտեմարան էր նրանց համար։ Հիշենք մի օրինակ։ Շնորհալին իր մեղավորությունը ցույց տալու համար մեկ առ մեկ խոսում է իր մարմնի անդամների (լեզվի, աչքերի, ոտքերի, ձեռքերի, բերանի, սրտի, երիկամների և այլն), ինչպես նաև հագուստի մեղավորության մա-

36 Ն ե ր ս ե ս Շ ն ո ր հ ա լ ի, Բ ա ն ք չ ա փ աւ, է չ 7—166։

սին³⁷, Հետագայում Ֆրիկը այդ եղանակով ստեղծում է մի ամբողջ բանաստեղծություն³⁸,

Ժամանակագրական առումով Շնորհալու աշխարհիկ պոեմներից առաջինը նրա «Վիպասանութիւնն» է՝ շարադրված հայ ժողովրդի պատմության զլխավոր դրվագների շափաբերմամբ: Հեղինակն այս եղանակով կամենում էր ընթերցողներին ծանոթացնել իր ժողովրդի և նրա զավակների պատմությանը, որպեսզի նպաստեր նոր սերնդի դաստիարակման գործին.

Սկրսանելով յայսքմ տառի
Ի նախահարսն իմ ըստ կարգի,
Թէ ո՞յ՛մ էին և կամ ուստի՞,
Եւ կամ յորու՞մ ժամանակի...
Զի որ բարոյն է քղծալի՝
Առ ի բարեաց նախանձ շարժի,
Եւ որ շաբին խրնամ տանի՝
Յօրինակացրս կըշտամրի³⁹:

Եվ եթե մեր բանաստեղծությունը միշտ այդ նպատակով դիմում էր աստվածաշնչային կերպարների և եկեղեցական սրբերի դրվատանքին, ապա այստեղ շրջադարձ է կատարվում դեպի ազգային գործիչներն ու նրանց հերոսական սխրանքները:

Բնականաբար Շնորհալին անդրադառնում է հայ ժողովրդի առասպելական նախնիներին՝ առաջին անգամ բանաստեղծությամբ վերամշակելով նրանց հերոսական կերպարները.

Այլ Թորգոմայ զՀայկրն ծրնեալ.
Յորմէ և Հայք մեք անուանեալ,
Առամանեակ անդրանկացեալ,
Որով Արմենք մեք կոչեցեալ...
Եւ ի սմանէ Կաղմոս ծրնեալ,
Այն, որ զԲելայն գալ զեկուցեալ,
Զոր և Հայկին ծանուցեալ,
Արիարար գդիմի հաբեալ,
Ըզլայնայիճըն յի քաշեալ
Եւ շեշտ կրծիցրն քալի անցեալ...⁴⁰

Որքան էլ սխեմատիկ, այնուամենայնիվ այդ պոեմն ընթերցողին ոգևորում էր հայրենասիրական, ազատագրական տրամադրություններով, ուսման և լուսավորության գաղափարներով: Իրանից բացի, փաստորեն այս պոեմում է, որ առաջին անգամ մեր բանաստեղծությունը կերտում է պատմական գործիչների դիմապատկերներ: Հիշենք մի քանի տող Մեսրոպ Մաշտոցին նվիրված հատվածից.

³⁷ Նույն տեղում, էջ 11—12:

³⁸ Ֆրիկ, Դիւան, Նյու-Յորք, 1952, էջ 302—311:

³⁹ Ներսես Շնորհալի, Բանք չափաւ, էջ 496—497:

⁴⁰ Նույն տեղում, էջ 502—503:

Յայսմ վայրի Լոկ յայտնեալ
Այն, որ Մեսրոպն կոչեցեալ,
Որ տեսական ուսմամբ վստժեալ,
Գործնականաւ գերազանցեալ...
Բարեաց արմատ Հայոց Եղեալ,
Զիմաստութեան զանձրն խնդրեալ...
Զամենեսեան լուսաւորեալ...⁴¹

Թո՛ղ որ հեռու լինեն զրանք կատարյալ համարվելուց, թո՛ղ որ ղեռնս նման հատվածները լոկ ընդհանուր գծերով բնութագրեն ներկայացվող ան-
ձանց, միևնույն է, նրանց նշանակությունը մեծ է՝ աշխարհիկ գործիչների կերպարներ կերտելու արվեստի հիմնադրման առումով։
Ժանրային տեսակետից քննվող պոեմն ուշագրավ է նաև իր սյուժեով, որի ողնաշարը հանդիսանում է հայ ժողովրդի պատմությունը, իսկ հավաքական հերոսը՝ ինքը ժողովուրդը։ Կառուցվածքային տեսակետից աչքի է ընկնում նախերգանքային մասի առկայությունը, որն սկսվում է «Պարտական է հօր որդի» տողով⁴² և ասյա միայն զալիս է բուն երկի շարադրանքը՝ «Աստանօր սկզբնաւորեալ»⁴³ տողով։ Կա նաև վերջաբան, որտեղ հեղինակն ամփոփում է իր խոսքը։

Արդ առաջին մտրդոյն սկրսեալ,
Ուտի բնութիւնս յառաջացեալ,
Զանցեալ նախնիս Հայոց սերեալ
Յուցաք բանիւ համառօտեալ...⁴⁴

Ասյա նա խնդրում է հիշել իրեն, նշում է գրություն թվականը (1121 թ.) և ազդարարում գործի ավարտը։
Ուշագրավ է, որ հենց այս վիպասանությանը ծանոթանալով, Լևոն թա-
զավորը պատվիրում է Վահրամ Բաբունուն՝ նման ձևով գրել հաջորդ ժամա-
նակների մասին⁴⁵։
Ներսես Շնորհալին, սակայն, լոկ սույն երկով չէր, որ ծառայեց այդ մեծ գործին։ Անհամեմատ նշանակալից եղավ նրա հռչակավոր «Ողբ Եղեսիոյ» պոեմն⁴⁶ իր հայրենասիրական, մարդասիրական, ազատասիրական տրամա-
դրություններով ու բարձր արվեստով։ «Իսկական բանաստեղծական հղաց-
մամբ և արվեստով գլուխ բերված մի մեծ քնարական քերթված է Շնորհալու այս երկը»,— գրում է Մ. Աբեղյանը՝ տալով նրա համակողմանի քննությունն ու արժեքավորումը⁴⁷։
Պոեմի շարժառիթը հանդիսացել է եղեսիա քաղաքի գրավումն ու ավե-
րումը Հալեպի Զանգի ամիրայի կողմից։ Պոեմը պիտի գրված լինի 1145 կամ 1146 թ.։ Հեղինակն այստեղ վերարտադրել է մի քանի կարևոր ղեպեր, հիմ-

41 Նույն տեղում, էջ 533—534։
42 Նույն տեղում, էջ 495—497։
43 Նույն տեղում, էջ 498—559։
44 Նույն տեղում, էջ 553—559։
45 Ն Ե Ր Ս Ե Ս Շ Ն Ո Ր Հ ա լ ի, Ողբ եղեսիոյ քաղաքի, Կալկաթա, 1832, էջ 97—166։
46 Նույն տեղում, էջ 1—96։
47 Մ. Աբեղյան, Երկեր, Երևան, 1970, Դ, էջ 127—147։

նական տեղը հատկացնելով Եղեսիային և նրա բնակչությանը հասած ծանր ու դժնդակ աղետներին: Նա կարողացել է թափանցել ողբերգության խորքերը և ստեղծել հուզիչ էջեր:

Ձու պաղատիմ զարթուցանել
 Ձգօրոքինդ անվանելի,
 Հատուցանել րազմապատիկ
 Ըզվրէժ ի ծոց իմոյ նեղչի...⁴⁸

Ամեն տողի մեջ զգացվում է Շնորհալու ասյրած վիշտն ու մորմոքը՝ կապված Եղեսիայի բնակիչների սպանությունների ու զերեվարման հետ: Հենց այս տրամադրություններն էլ նրան տեղափոխում են դեպի մի ուրիշ իրադարձություն՝ տեղի ունեցած շուրջ մեկ դար առաջ, դեպի հայկական վերջին թագավորության անկումը և հետագայի ավերածությունները, առիթ դառնալով սրբ-տառուխ նոր ողբի ու նոր մտորումների Ուշագրավ է, որ ժողովրդի կրած այս հարվածները հեղինակը միաձուլում է մի ամբողջական վշտի մեջ և դրսևորում անձնավորված Եղեսիա քաղաքի շուրթերով:

Բայց և զԲեզ յայսմ հրաւիրեմ,
 Արևելեան քաղաքդ Անի.
 Կցուդ իմոյս յինև ձայնի
 Եւ քսրալիլ տարակուսի...⁴⁹

«Ողբ Եղեսիոյ» պոեմում հատուկ տեղ է հատկացված նաև ազատագրման գաղափարին, որն այն ժամանակվա պայմաններում կապվում էր Արևմտյան Եվրոպայի հետ: Որքան էլ որ անհեռանկար էր այդ հույսը, այնուամենայնիվ հեղինակը, կառչած նրանից, առաջին անգամ կերտում է ազատաբաղձության այնքան հրազային և այնքան մարդկային գովերգություն:

Ահա սակաւ ինչ ժամանակ
 Փոխէ զպրդտուր ջուրն ի յրստակ...
 Գա՛ն, ժողովին յամէն կողմանց,
 Ուր հալածեալ են և ցրուած...
 Ես համրառնամ զաշտ ի րարձանց.
 Զձեզ տեսանեմ՝ շուրջ ժողոված:
 Ընդ ու իւրեղամ յոյժ ցրեծացած.
 Գիրկս արկանեմ զուարեացած:
 Եւ րզտրխական զգեստ մերկացած
 Կարմիր-կանաչ գոյն զգեցած...⁵⁰

Դա ոչ միայն ավերված Եղեսիայի կամ հայրենաբաղձ Ներսես Շնորհալու, այլև ողջ հայության այն ժամանակվա հրազանքն էր: Միանգամայն իրավացի էր Մ. Աբեղյանը, երբ Ներսես Շնորհալու գրական ժառանգությունը զնահա-տելիս, ասում էր. «Մեր բանաստեղծությունը XIII դարի կեսին երկնքից իջել էր

⁴⁸ Ն ե ր ս ե ս Շ ն ո ր հ ա լ ի, Ողբ Եղեսիոյ քաղաքի, էջ 5:

⁴⁹ Նույն տեղում, էջ 13:

⁵⁰ Նույն տեղում, էջ 86, 88, 89:

երկիր... Շնորհալի քերթողի փափուկ տրտմական կամ լուրջ հույզերով և անուշ շեշտերով... Ամեն ինչ թեթև ու ճաշակավոր, անբռնադբոս ու կենդանի»⁵¹։

Մեր խոսքը պակասավոր կլինեն, եթե չհիշեինք նաև Շնորհալու մատուցած ծառայությունները հայ երաժշտության զարգացման ասպարեզում։ Պարզվում է, որ նա հանդիսացել է նաև իր բոլոր երգային միավորների երաժշտության հեղինակը՝ ստեղծելով մի քանի հարյուր երաժշտական գողտրիկ եղանակներ։ «Բայց և առաել զարմանալի էին արուեստք զանազան եղանակացն, զոր աննման միմեանց յօրինէր. որպէս յանժախելի և յառատագոյն գանձարանէ ձոխ և ի հարուստ մտացն արտաբերեալ...», — ասում է նրա կենսագիրը⁵²։

Ներսես Շնորհալին Գրիգոր Նարեկացուց հետո մեր միջնադարյան դրականության հաջորդ մեծությունն էր՝ կոշված առաջնորդելու այն մտավոր ընթացքը, որը, երկրի ընդհանուր վիճակի և սոցիալ-տնտեսական տեղաշարժերի թելադրանքով, նոր ուղի էր բացելու հայ գրականության և մասնավորապես բանաստեղծության առջև։ Ներսես Շնորհալու գրչի տակ էր, որ Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Սարկավազի և այլոց բանաստեղծությունների մեջ նկատվող աշխարհականացման տարրերը զարգացման մի նոր փուլ մտան։

НЕРСЕС ШНОРАЛИ

(К 800-летию со дня смерти)

Доктор историч. наук А. Ш. МНАЦАКАНИЯН

(Резюме)

Статья посвящена жизни и деятельности выдающегося армянского мыслителя, поэта, музыковеда и общественного деятеля Нерсеса Шнорали. Рассматривается поэтическое творчество Шнорали, характеризуется то новое, что внес он в армянскую литературу. На основе богатых древних традиций, а также требований времени Шнорали выдвинул новые темы, поднял новые проблемы, волновавшие современное ему общество, обогатил средства художественного выражения и искусство стихосложения. Он нередко обращался к народному творчеству, а иногда использовал и живой современный разговорный язык. В творчестве Шнорали впервые нашло свое отражение светское мироощущение в поэзии. В этом смысле особого внимания достойны его поэма «Плач на взятие Эдессы», «Загадки» и другие произведения.

⁵¹ Մ. Արևիկյան, Երկեր, Դ, էջ 147։

⁵² «Սոփերք հայկական», ԺԴ, էջ 38։